

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր ուղղութիւնը.— ներքին գործոց միևիւսրի միմանի կարգադրութիւնները.— Ժառանկի նշաններ ներքին կեանքի զանազան միւղերում.— Գ. Տեր-Յովհաննիսեան.— Ե. Ջելիմսկիյ.— Հասարակական օժանդակութեան գիտակցութիւնը.— Մ. Մանրաշեանի նպաստը դրամ. ընկ.— Կ. Եղեանի յորեղեանը.— Հ.— կար. սեմինարիա.— Դասաստ. պալատի որոշ.— Զուրապովների նուերները.— Կսակ ուռաց գրական փոփոխ.— «HABBA» շարարարների հրատարակչի րո-դած կարողութիւնը.— Երաժշ. դպր. Թիֆլ.— Կովկասեան կառավարչացեփի նոր օգնականի նշանակումը.— Հայոց գրականութեան դասախօսութիւնները Մոսկ. համալս.:

Զորս տարուայ գործունէութիւնից յետոյ առանձնապէս խօսել «Մուրճ»-ի ուղղութեան մասին գուցէ առանձին կարիք էլ չլինի, քանի որ այդ ուղղութիւնը արտայայտուած է այն 47 հատորների մէջ, որոնք դրուած են մեր հասարակութեան առաջ: Եթէ այդ հասարակութիւնը իսկապէս հետաքրքրուած է իր գրականութիւնով՝ պէտք է որ, յամենայն դէպս, աննկատելի չմնար նրա համար այնքան նեղութիւններով կատարուած մի գործ...

Իւրաքանչիւր օրգանի ուղղութիւն երևում է ոչ միայն նրանից թէ ի՞նչ գլոսաբանութիւն է տալիս կամ ի՞նչպէս է վերաբերուած նա այսուայն հասարակական, քաղաքական և գրական երևոյթներին, ի՞նչ իդէալներով է նա ղեկավարուում այս կամ այն գնահատութիւնը անելիս—այլ և երևում է բոլոր այն նիւթերից որ նա զետեղում է իր էջերում, անշուշտ ոչ պատահա-կան կերպով, այլ որոշ ընտրութեամբ: Նիւթերի այդ ընտրու-թեան մէջ և արտայայտուած է նրա ուղղութիւնը:

Մանրամասնութիւնների մէջ չմտնելով, մենք կարող ենք ասել մեր ուղղութեան մասին որ մենք աշխատել ենք իւրա-քանչիւր հարցում փնտրել ճշմարտութիւնը, անկախ որեւէ կող-մնակի միտումներից և շահերից: Անհատների և ազգերի յա-րաբերութիւնների խնդրում մենք ղեկավարուել ենք լիակա-տար արդարութեան պահանջներով: Անձի, պատուի և աշխա-տանքի համահաւասար և խիստ օրինական. ապարմովութիւնը համարել ենք հասարակական խաղաղ զարգացման վիժաքար:

Այդ բոլոր սկզբունքների հետևողը բնականաբար պէտք է ցանկայ լոյս, լոյս և լոյս:

Ճշմարտութեան ճանապարհը լուսաւորւում է միմիայն բազմակողմանի, անաչառ և ազատ քննադատութեամբ: Արդարութիւնը բաղխում է ալ'տրուիստական զգացմունքից. պատուաստել հասարակութեան գիտակցութեան մէջ քննադատական վերաբերմունք և զարթեցնել նրա խղճի մէջ թմրած ալ'տրուիստական զգացմունքները մենք համարել ենք մեզ համար զեկավարող սկզբունքներ:

Մասնաւորելով խօսքը քննադատութեան այն ձևի մասին, որ յայտնի է պոլեմիկա կամ բանակռիւ անունով, կարծում ենք թէ կարող ենք ասել, որ աշխատել ենք խոյս տալ մեր գրական բարքերում բուն դրած այն տգեղ սովորութիւնից, որ վիճաբանութիւնը քննողող առարկայից փոխում է անձնականի և բանակռուական թուացիկ աջողութեան զոհում է ճշմարտութիւնն ու արդարութիւնը, դիմելով բառերի կանկանապարին...

Որչափ քիչ պատրաստութիւն ունի մարդ, այնքան դիւրին է թւում նրան բարդ հարցերի լուծումը: Տուէք գիտութեան պաշար և կ'աւելանայ հասարակութեան մէջ խոհական և լուրջ վերաբերմունքը: Եւ մեր ցանկութիւնն է տալ մեր ընթերցողին դիւրամատչելի ձևով որքան կարելի է առատ պաշար, ընդարձակել նրա մտաւոր հորիզոնը: Լոկ իդէօլոգիան, այբուբենական ճշմարտութիւնների մասին բառախաղն ու բառերի կուտակումը սին գործ ենք համարում. պէտք է երբէք չմոռանալ իրականութիւնը. իւրաքանչիւր սերունդ որոշ դրական գործ ունի կատարելու, իսկ գործը աջող կարող է կադարուել միմիայն այն ժամանակ, երբ լաւ ուսումնասիրուած են բոլոր հանգամանքները, իրական պայմանները և պատմական պահանջին համապատասխան քայլեր են անւում հաստատ հողի վրայ: Ամեն մի իդէալի հասնելու համար պէտք է հաստատ քայլերով առաջ գնալ: Թռչել, սաւառնել կարելի է ֆանտազիաների աշխարհում. ուստի իրաները հարկաւոր են ապազայի հեռանկարներով ոգևորուելու համար, իսկ գործելիս պէտք է օգտուել գիտութեան և կենսաբան փորձերից և քայլառքայլ առաջ ընթանալ միշտ ոտի տակ ունենալով իրականութիւնը իբրև հաստատ հող: Հակառակ դէպքում մենք կը նմանուենք այն աստղագետին, որ աչքերը չուած երկնքին քայլում է չիմանալով որ ոտի տակ վիհ կայ բացուած...

Անցեալ անգամ մենք արձանագրեցինք այն խանդավառ վերաբերմունքը, որ ցոյց տուեց մամուլը ներքին գործոց մի-նիստրի յայտարարած նոր սկզբունքին. վստահութիւն դէպի հասարակութիւնը: Ռուսաց մամուլի լաւագոյն օրգաններն ազատ և լուրջ ըննութեան ենթարկեցին ներքին կեանքի բազմաթիւ ցաւեր, մատնանիշ արին հասարակական խաղաղ զարգացման այն էական հիմքերը, առանց որոնց անկարող է առաջ ընթանալ մի քաղաքակիրթ պետութիւն: Համահաւասար օրինականութեան, համազուտարումների և խօսքի ազատութեան և տեղական ինքնավարութեան պաշտպան օրգաններին հակառակողներ շատ քիչ ճարտեցին նոյնիսկ պահպանողական մամուլի մէջ. միայն «Моск. Вѣд.» հաւատա-րեմ մնաց իր վաղեմի սովորութիւններին: Մամուլի միջոցով արտայայտուած ուռւ հասարակական կարծիքը համակիր է իշխ. Սվետաուպոլկ-Միրսկու ուղղութեան: Մի շարք պատեհ կարգադրութիւններով նոր մինիստրը աւելի ևս զբաւեց հասարակութեան համակրանքը. աքսորից վերադարձուած են մի շարք անձեր, հրապարակային հսկողութիւնից են աղատուած և հասարակական գործունէութեան իրաւունք վերստացած ուրիշները: Զեմստվոնները իրաւունք են ստացել կազմակերպելու բոլոր զեմստվոններից մի ընդհանուր մար-մին, մի կենտրոնական ժողով՝ կոնսուլտորելու վերաւոր զինուորներին տրուելիք օգնութեան գործը զեմստվոնների կող-մից: Պետերբուրգում պէտք է կայանայ նահանգային զեմստվո-նների նախագահների համազուտարում. խօսուում է որ վճռուած է Ռուսաստանին վերադարձնել 1864 թ. օրէնքները զեմստվո-նների կազմութեան և իրաւունքների վերաբերութեամբ, ասում են թէ իշխանը մշակել է ներքին բարենորոգումների մի ծրա-գիր, մինիստր տրամադիր է ընդարձակելու այն անձերի շըր-ջանը, որոնց կարելի է յանձնել ժողովրդական գրադարան-ըն-թերցարանների վերահսկողութիւնը ևայլն ևայլն:

Այդ ուղղութեան կարծես իբրև արձագանգ նաև լուսաւո-րութեան մինիստրութեան մէջ նկատելի են որոշ տրամա-դրութիւններ: Այդպէս լրագրներից իմանում ենք որ լու-սաւորութեան մինիստրը թոյլատրել է այս տարի վար-շաւայի համալսարանում հրէայ ուսանողների թիւը 10%-ից բարձրացնել 15%-ին, բացի դրանից, անցած տարի դուր-սը մնացած 11 հրէայ երիտասարդներին, որոնք չէին ընդու-նուել որոշուած 10% արդէն լրացած լինելու պատճառով, ճանաչեցին ուսանող: Նոյնպէս 15%-ի է հասցրած ս. Վլա-դիմիրի համալսարանում հրէայ ուսանողների թիւը:

Ժողովրդի լուսաւորութեան գործին օգնութեան է հասնում և մամուլը հիմնելով ֆոնդ, ընդհանուր համառուական նուիրատուութիւններով նպաստելու համար ընդհանուր կրթութիւն տարածելու մեծ գործին. Русь, Русскія Вѣдомости թերթերը միջանի օրում ահագին գումարներ ժողովեցին: Նշաւաւոր անձերից կազմակերպուեց այդ ֆոնդի կոմիտեան, որ պէտք է ներկայանայ ներքին գործոց մինիստրին:

Ֆինասների մինիստրութիւնն էլ ինչպէս ասում է Русск. II. լրագիրը, մտադիր է իր իրաւասութեան տակ եղած դրարոցներում, որոնք գտնւում են Լեհական թագաւորութեան սահմաններում, թոյլատրել կաթոլիկ երեխաների համար կրօնն անցնել լեհական լեզուով. բացի դրանից, մինիստրութիւնն սկսել է քննել նոյն երկրի առևտրական դպրոցների ծրագիրը: Մտադրութիւն կայ այդ բոլոր դպրոցներում մտցնել լեհական լեզուի և գրականութեան ուսումնասիրութիւնը:

Ժամանակի նշան են և հետեւեալ տեղեկութիւնները.

Ներքին գործերի մինիստրութիւնը կարգադրել է, որ անցագրերը և դրանց վերաբերուող ուրիշ փաստաթղթերն այսուհետև այլևս ոստիկանութեան միջոցով չուղարկուեն իրանց տէրերին, այլ մեղջանների և այլ վարչութիւնների կողմից անմիջապէս ուղարկուեն իրանց տէրերի հասցէներով: Իսկ պոստային վարչութեանը հրամայուած է այսուհետև յիշուած հիմնարկութիւններից ձրի ընդունել և փոխադրել պասպորտներն ու նրանց վերաբերեալ դոկումէնտների փակուած ծրարները:

Ինչպէս յայտնի է, ներկայ տարուայ ապրիլի 19-ին հրատարակուած օրէնքով մի օտարժրիստոնէական (ոչ պրաւօսլաւնայ) եկեղեցու դաւանութիւնից մի ուրիշին անցնելու համար պէտք է թոյլտուութիւն լինի նահանգապետից: Այժմ իբր բացատրութիւն այդ օրէնքի, հոգևոր գործերի և օտարադաւան քրիստոնեաների դեպարտմէնտի կողմից նահանգապետներին ուղարկուած է մի շրջաբերական, որ պարունակում է հետեւեալ կէտերը. 1) Մէկ օտարադաւան քրիստոնէական եկեղեցուց միւսին անցնելը թոյլատրուում է միայն անցնողների սեփական, ազատ, անբռնաբար ցանկութեան համաձայն, առանց հակառակ եկեղեցու հոգևորականութեան կամ աշխարհականների միջամտութեան: 2) Այդ առիթով տրուած խնդրի հետ պէտք է լինեն մետրիքական և խնդրատուններին պրաւօսլաւնայ եկեղեցուն չպատկանելն ապացուցանող թուղթ, ստորագրուած երկու վստահելի անձերի կողմից: 3) Մի բողոքական եկեղեցուց մի ուրիշ բողոքական եկեղեցի անցնելու համար չէ պահանջուում նոյեմբեր, 1904.

քաղաքական իշխանութեան թոյլտուութիւնը: 4) Խնդիրը պէտք է կրէ «գերբովայա մարկա».—Բացի այդ կէտերից, բացատրուած է, որ պետութեան մէջ բրիտանական եկեղեցիներից ճանաչուած են—կաթոլիկ-հռոմէական, հայ-կաթոլիկ, հայ-լուսաւորչական, աւետարանական, բեֆորմատորական, մենոնիտների և բապտիստների եկեղեցիները, և որ ուս աղանդներից օտարադաւան եկեղեցիներն անցնելը չէ թոյլատրուած:

Հոկտեմբերի 25-ին, ցերեկուայ ժամը 2-ին Պետերբուրգի համալսարանում ժողով անելուց յետոյ, ուսանողների մի ահագին խումբ, երգելով ու աղմկելով, Նեայի ամբարով, Դվորցովը կամուրջով դիմեցին Նեակիյ պրոսպեկտ: Ամբարը բաժանուց երկու մասի. առաջինը՝ մօտ 200 հոգի, գնաց Նեակիյ պրոսպեկտի ձախ կողմով, երկրորդ՝ այսպէս կոչուած՝ «մարսելիէզը», իսկ միւս մասը, «Եննիցա» պահպանողական կուսակցութեան ներկայացուցիչներից, շարժուց փողոցի աջ կողմով՝ հիմնը երգելով: Ուսանողների այդ թափորի ճանապարհին հաւաքուցին ահագին թուով հետաքրքրուած անձեր: Երկու հակառակորդ կուսակցութիւններն իրար ուղղելով բողոքներ, սուլոցներ և այլն հասցնում էին այնտեղ, որ յաճախ քիչ էր մնում գործը հասնէր ձեռնամարտի: Շուտով հասան քաղաքապետի օգնականը և ոստիկանապետը, որոնք համոզեցին ուսանողներին ցրուել: Ժամը 4-ին Նեակիյ պրոսպեկտն ստացաւ իր սովորական կերպարանքը: Այսպիսով, ոստիկանութեան հանգիստ վերաբերմունքը դէպի «ցոյցը»—նպաստեց նրա թուլանալուն և դադարելուն առանց որևէ միջնադէպի:

Անցած ամսուայ ընթացքում մեր հասարակութիւնը զբոսացնելու երկու գործից, որոնք իրանց ժամանակ որոշ ծառայութիւն են մատուցել մեր առաջադիմութեան գործին:—Հոկտեմբերի 18-ին վախճանուց երգուեալ-հաւատարմատար Յակոբ Տէր-Յովհաննիսեանը, որ մի ժամանակ եղել է հայոց ծխական դպրոցների տեսուչ Թիֆլիզի թեմում, ապա հոգաբարձու Ներսիսեան դպրոցում և խմբագիր-հրատարակիչ «Մանկավարժական թերթ»-ի, որ լոյս տեսաւ 1878 թուին և ապրեց միայն մի տարի: Միւս գործիչը՝ Ստեփաննոս Զեկինսկին, որ վախճանուց հօկտ. 22-ին, եռանդուն գործունէութիւն էր ցոյց տալիս իննսուական թուականներին մեր հրատարակչական և բարեգործական ընկերութիւնների կեանքում, ինքը կազմում և հրատարակում էր ժողովրդական բրօշուրներ գիւղատնտեսութիւնից և, մասնակցելով Անդրկովկասի գիւղա-

ցիական կեանքը ուսումնասիրող Տիխէւեան յանձնաժողովի աշխատանքներին, տուել է Ивсл. эконом. быта госуд. крест. въ Зангезурскомъ уѣздѣ հիմնական աշխատասիրութիւնը:

Հին-Նախիջևանի հայ գիւղերից մէկում ծնուած Զելիկսկին հնարաւորութիւն չէր ստացել բարձրագոյն կրթութիւն ստանալ, սակայն բնական ձիրքը և աշխատասիրութիւնը լրացրին նրա կրթութեան պակասները. ո՞րքան կ'օգտուէր մեր կեանքը եթէ մեր ինտելիգենցիան այնպէս լաւ ճանաչէր մեր երկիրն ու ժողովուրդը, ինչպէս հանգուցեալ գործիչը:

Նոյեմբ. 6

Լ. Ս.

—Մեր տեսակէտը հայոց թատրոնի մասին յայտնի է մեր ընթերցողներին. դեռ 1901 թուի № 10-ում մենք յայտնում էինք այն միտքը, որ առանց արհեստական միջոցների, առանց հասարակական գրամական օգնութեան չեն կարող աճել մեզանում շատ կուլտուրական պահանջներ: Հին Աթէնքում Սոլոնը, ասել էինք մենք, օրէնքով պարտաւորեցնում էր հարուստներին՝ իրանց սեփական ծախսերով հոգալ թատրոնական գրոսածքները բեմի վրայ ներկայացնելու մասին: Պերիկլէսը սահմանել էր պետական գանձարանից փող տալ չքաւոր քաղաքացիներին՝ թատրոն յաճախելու համար: Եւ թատրոնը նպաստ էր ստանում ոչ միայն հին Աթէնքում, այլ և ժամանակակից Եւրոպայում—նպաստ է ստանում Պարիզի Théâtre Français-ի նման հիմնարկութիւնը: Եւ գրամատիկական ընկերութեան փորձը դարձեալ ապացուցեց այդ ճշմարտութիւնը:

1903—1904 թ. թատրոնական ներկայացումներից ստացուած է 16,965 ռ., իսկ ծախքը եղել է 24,718 ռ.—դեֆիցիտ 7753 ռ.: Վարչութիւնը այդ դեֆիցիտը աշխատել է ծածկել և ի միջի այլոց նուէրներ է հաւաքել 5435 ռուբլի: Անշուշտ կարեւոր է և պէտք է ըննադատել վարչութեան այս կամ այն թերութիւնը, բայց երբէք չպէտք է մոռանալ, որ մանաւանդ մեր առանձնայատուկ պայմաններում հասարակական բազմաթիւ ձեռնարկութիւնները, որքան էլ օրինակելի կերպով տառեան, այնուամենայնիւ պահանջում են խնամք, արուեստական նպահպանում:

Ուրախալի է որ մեր հասարակութեան որոշ մասը սկսել է գիտակցել հասարակական օժանդակութեան կարեւորութիւնը: Դրամ. ընկ. Նոյեմբերի 7-ին կայացած նիստում պ. Ա. Մանթաշեան յայտնեց, որ նա յանձն է առնում 3 տարի շարունակ